

ԿԱՐԳ

Անհաղաթահարելի ուժի հանգամանքների (Ֆորս-մաժոր)
հավաստագրերի տրամադման և մերժման

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը /հետայսու՝ ՀՀ ԱԱՊ/, հիմք ընդունելով՝ «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի «դ», ՀՀ ԱԱՊ կանոնադրության 2.4.13 կետերը, ինչպես նաև ՀՀ ԱԱՊ-ի 03.04.2020թ. նախագահության նիստի որոշումը, սահմանում է ՀՀ ԱԱՊ-ի կողմից անհաղաթահարելի ուժի հանգամանքների (Ֆորս-մաժոր) հավաստագրերի տրամադման և մերժման ընթացակարգերը:

1. Սույն կարգի իմաստով սահմանվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1.1 Անհաղաթահարելի ուժի հանգամանքներ (Ֆորս-մաժոր)՝ - արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողությունները՝

Դրանք են, հայտարարված՝

- աշխարհավարակները /պանդեմիա/, կամ համաճարակները,
- բնական և տեխնածին աղետների հետևանքով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքները,
- բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբուքեր, սողանքներ),
- գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հանրապետություն գազի ներկրման ընդհատումները, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախանշված այլ դեպքերը:

1.2 Հայտատու՝- Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական միասնական գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձ կամ օտարերկրյա պետության իրավունքով իրավաբանական անձ չհանդիսացող օտարերկրյա կազմակերպություն, որոնք հավաստագիր ստանալու համար դիմել են ՀՀ ԱԱՊ և կրում են պատասխանատվություն ներկայացված փաստաթղթերի իսկության և դրանցում շարադրված տեղեկությունների արժանահավատության համար:

2. Հավաստագրերը ձևակերպվում են և տրամադրվում են ՀՀ ԱԱՊ-ի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

3. Հավաստագրի ձևակերպման և տրամադրման նպատակով ՀՀ ԱԱՊ-ը՝ սահմանված կարգով գրանցում է դիմումը:

2. Հավաստագրի ստացման դիմելու կարգ

2.1. Հավաստագիր ստանալու համար հայտատուն ՀՀ ԱԱՊ է ներկայացնում անհաղթահարելի ուժի հանգամանքների (ֆորս-մաժոր) ստանալու հիմնավորված գրավոր դիմում, որտեղ նշված է պայմանագրի/ արտասահմանյան առևտրային պայմանագրի համարը և ամսաթիվը, ինչպես նաև պայմանագրում առկա Ֆորս մաժորի հատվածը, եթե այդպիսին առկա է, հավաստագրի ձևակերպման և տրամադրման համար ՀՀ ԱԱՊ-ի ծառայությունների դիմաց հայտատուի վճարումը հաստատող փաստաթուղթ:

2.2. Պայմանագրի պատճենը՝ անհաղթահարելի ուժը հաստատելու համար: Դիմումին կարող են կցվել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնց մասին հայտատուն հարկ է համարում տեղեկացնել ՀՀ ԱԱՊ-ին:

2.3. Ներկայացված տեղեկություններն ու փաստաթղթերը /փաստաթղթերի պատճենները/ պետք է վավերացված և/կամ/ հաստատված լինեն սահմանված կարգով: ՀՀ ԱԱՊ-ն իրավունք ունի պահանջելու ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, ինչպես նաև լրացուցիչ անհրաժեշտ այլ փաստաթղթեր (կառավարության որոշումներ, գերատեսչական ակտեր և այլն):

2.4. Դիմումն ու դրան կից փաստաթղթերը հայտատուի կողմից կարող են նախապես ուղարկվել ինչպես էլեկտրոնային փոստով, այնպես էլ ՀՀ ԱԱՊ ինտերնետային կայքէջին՝ pdf ֆորմատով, պարտադիր էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

3. Հավաստագրի տրամադրման մերժման կարգ

3.1. Դիմումը ստանալուց հետո, ՀՀ ԱԱՊ-ն ուսումնասիրում է ներկայացված տեղեկությունները և հինգ աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում հավաստագրի տրամադրման մասին.

3.2 Հավաստագրի ձևակերպման և տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններից տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ ժամկետով:

3.3. Հավաստագրի տրամադրումն կարող է մերժվել հետևյալ դեպքերում, եթե՝
ա) հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը պարունակում են ոչ արժանահավատ կամ հակասական տեղեկություններ:

բ) դիմումում հիմնավորված արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտելով պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին, իրականությանը չեն համապատասխանում:

գ) սույն կարգի 2-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում:

դ) Ներկայացված չէ հավաստագրի ձևակերպման և տրամադրման համար ՀՀ ԱԱՊ-ի ծառայությունների դիմաց հայտատուի վճարումը հաստատող փաստաթուղթ:

3.4 Հավաստագրի տրամադրումը մերժելու դեպքում՝ ՀՀ ԱԱՊ-ն նման որոշման

կայացման պահից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր, էլեկտրոնային փոստին կամ ինտերնետային կայքէջին ուղարկված դիմումների դեպքում՝ հեռահաղորդակցման այդ միջոցներով տեղեկացնում է հայտատուին հավաստագրի տրամադրման մերժման մասին՝ մերժման պատճառ հանդիսացած հանգամանքների պարտադիր նշումով:

4. Հավաստագրի ձևակերպման լեզուն և պարտադիր այլ պահանջներ

4.1. Հայտատուի գրավոր խնդրանքով հավաստագիրը կարող է ձևակերպվել նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով, եթե նման պահանջ նախատեսված է այն երկրի օրենսդրությամբ, որտեղ իրականացվում է մատակարարումը:

4.2. Հավաստագրի բնօրինակը ձևակերպվում է Ա4 (210 x 297 մմ) ֆորմատի սպիտակ թղթի վրա՝ պատրաստված պաշտպանվածության որոշակի աստիճանով ապահովված փաստաթղթերի ձևաթղթեր հանդիսացող օրինակների վրա: Հավաստագրի պատճենները ձևակերպվում են սպիտակ թղթի վրա՝ առանց պաշտպանվածության մակարդակների կիրառման և ունեն «Պատճեն» գրառումը:

4.3. Հավաստագրի բնօրինակն ու մեկ պատճենը հանձնվում են հայտատուին, հավաստագրի երկրորդ պատճենը մնում է ՀՀ ԱԱՊ-ում:

Հայտատուի գրավոր դիմումով կարող է տրամադրվել հավաստագրի լրացուցիչ պատճեն:

5. Հավաստագրի գործողության ժամկետները

5.1. Հավաստագրում նշված տեղեկությունների փոփոխման դեպքում՝ հայտատուի գրավոր դիմումով կարող է տրամադրվել նոր հավաստագիր՝ սույն Կարգով նախատեսված կարգով և ժամկետներում:

5.2. Հավաստագրի բնօրինակը կորցնելու կամ վնասելու դեպքում կարող է տրամադրվել հավաստագրի կրկնօրինակ:

Հավաստագրի կրկնօրինակ ստանալու համար հայտատուն ՀՀ ԱԱՊ է ներկայացնում ազատ ձևի դիմում:

Հավաստագրի կրկնօրինակը տրամադրվում է նոր ձևաթղթի վրա:

Հավաստագրի կրկնօրինակի գործողության ժամկետը չի կարող գերազանցել բնօրինակի գործողության ժամկետին:

6. Դիմումը և հավաստագրի պատճենը պահվում են ՀՀ ԱԱՊ պահոցում 3 տարի ժամկետով, իսկ ժամկետի լրանալու դեպքում այն օրենքով սահմանված կարգով փոխանցվում է լիազոր մարմնին: